Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

2023 թ. մարտի 22-24-ը, Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն)

4. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարար Մ. Մուրաշկո

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Առողջ հասարակություն» խորագրով ԱՊՀ համաժողովին

6. Քննարկված թեմաները

Համաժողովի օրակարգի հիմնական թեման էր բժշկական օգնության որակի և հասանելիության ապահովման հարցերը:

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին ԱՊՀ մասնակից պետությունների առողջապահական համակարգերի զարգացման արդիական հարցերը, մասնավորապես՝ առաջնային բժշկասանիտարական օգնության կատարելագործման, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առողջապահության բնագավառի թվայնացման, բժշկական անձնակազմի

պատրաստման, բժշկական արտադրանքի շրջանառության հարցեր և այլն: Համաժողովը հարթակ էր ԱՊՀ մասնակից պետությունների առողջապահության բնագավառի պատասխանատուների, ինչպես նաև փորձագիտական շրջանակների ներկայացուցիչների միջև առարկայական երկխոսություն ծավալելու համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովը բաղկացած էր մի քանի զուգահեռ ընթացող նիստերից, որոնց ընթացքում ԱՊՀ անդամ-պետությունների առողջապահության ոլորտի ներկայացուցիչները քննարկումներ ծավալեցին վերը նշված առողջապահական ուղղությունների շուրջ: Հայաստանյան պատվիրակության անդամները ելույթ ունեցան և ներկայացրեցին առողջության առաջնային պահպանման, մասնագիտական կրթության, ուռուցքաբանության, դեղերի շրջանառության, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ոլորտներում իրականացվող բարեփուխմները:

Համաժողովի ընթացքում ելույթ եմ ունեցել՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրականացվող բարեփոխումները:

Համաժողովի առաջին օրը կազմակերպվեց նաև «Կանանց դերը առողջապահության նորարարական զարգացման գործում» խորագրով կլոր սեղան, որին հանդես եմ եկել ողջույնի խոսքով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում տեղի են ունեցել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են հետագա երկկողմ և բազմակողմ համագործակցության ուղղությունները:

ՌԴ առողջապահության նախարարի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին երկու երկրների միջև համագործակցության ընթացքը, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող փոխգործակցային մի շարք ուղղություններ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ռուսական կողմից առաջարկ հնչեց 2023 թվականին հայ-ռուսական առողջապահական հերթական համաժողովն անցկացնել Մոսկվայում, ինչպես նաև համագործակցության հնարավոր մեխանիզմներ մշակել դեղագործության, օրթոպեդիայի և վնասվածքաբանության ոլորտներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2023 թ. մարտի 29

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157